ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

23.10.2025թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/194 գնման պայմանագրի

ք. Երևան « 11 » մայիսի 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՑԵՆՏՌԱ ԿՈԼ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ե. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 23.10.2025թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/194 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.6 կետը և **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության** կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված՝ **Երևան քաղաքի Աճառյան փողոցում և Մյասնիկյան պողոտայում արտաքին լուսավորության հենասյուների և գործող/ինչպես նաև նախագծման, կառուցման փուլում գտնվող կոմունիկացիային միանալու համար ստորգետնյա խողովակների տեղադրման աշխատանքների** կատարման ժամկետը երկարաձգել 30 (երեսուն) օրացուցային օրով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«ՑԵՆՏՌԱ ԿՈԼ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ք. Երևան, Էստոնական թ. 25, 62-63
ՀՀ ֆինանսների նախարարության	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 19300627416400
Հ/Հ 900012001351	ՀՎՀՀ 01299858
ՀՎՀՀ 02593108	
Վ.Պապիկյան ----------	Ե. Գրիգորյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ